ՈՉ ԻՄԱՑՅԱԼ ՄԱՀԸ ՄԱՀ Է, ԻՄԱՑՅԱԼ ՄԱՀՆ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ.ԱՅՍՕՐ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

01.11.2022 18:35

Հայրենիքի պաշտպանության համար փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի **նախագահի որոշմամբ** սահմանված են հարգանքի տուրք մատուցելու օրեր:

Այսօր՝ նոյեմբերի 1-ին, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Միքայել Դանիելյանի հիշատակի օրն է: Միքայելը փաստաբան Խաչիկ Դանիելյանի որդին է:

ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն, խնկարկեցին և ծաղիկներ խոնարհեցին Միքայել Դանիելյանի շիրիմին:

Միքայել հերոսաբար կռվել և զոհվել է Մարտակերտի դիրքերում՝ 2020թ. նոյեմբերի 1-ին ԱԹՍ-ի հարվածից: Նա հետմահու պարգևատրվել է «Մարտական Ծառայություն» և «Արիության Համար» շքանշաններով:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները Եռաբլուրում ծաղիկներ խոնարհեցին նաև փաստաբան Մաի Հակոբյանի որդու՝ Հրաչիկ Ավետիսյանի շիրիմին:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })